Ժամանակն է կատարել Ձեր բժշկական պլանի ամենամյա վերանայումը

Medicare-ի բաց ցուցակագրումը՝
Հոկտեմբերի 15-ից դեկտեմբերի 7-ը

Medicare

Medicare-ի բաց ցուցակագրումը հոկտեմբերի 15-ից դեկտեմբերի 7-ն է

Բաց ցուցակագրումը դա ձեր ժամանակն է վերանայելու ձեր Medicare-ի առողջության կամ դեղերի ծածկույթը և որոշելու՝ ցանկանո՞ւմ եք արդյոք փոփոխություններ անել: Հիշե՛ք, Medicare-ի ծախսերն ու արտոնությունները կարող են փոփոխվել յուրաքանչյուր տարի: Ձեր տարբերակները համեմատելը կօգնի ձեզ ավելի լավ ծածկույթ գտնել կամ գումար խնայել:

Գոյություն ունի ձեր Medicare ապահովագրությունը ստանալու 2 հիմնական եղանակ՝

- **Original Medicare:** Մաս A (Հիվանդանոցային ապահովագրություն) և Մաս B (Բժշկական ապահովագրություն): Դուք նաև տարբերակ ունեք միանալու Medicare-ի դեղերի առանձին ծրագրին՝ դեղերի ծածկույթ ստանալու համար (Մաս D).
- **Medicare Advantage (Մաս «C»).** Medicare-ի կողմից հաստատված պլաններ մասնավոր ընկերություններից, որոնք միավորում են ձեր Մաս A, Մաս B և սովորաբար Մաս D մեկի մեջ:

Բաց ցուցակագրման ընթացքում դուք կարող եք միանալ, փոխել կամ թողնել Medicare Advantage պլանը կամ Medicare դեղերի պլանը, անցնել Original Medicare-ին կամ պահպանել ձեր ընթացիկ ծածկույթը: Եթե դուք վերանայել եք ձեր տարբերակները և գոհ եք ձեր ընթացիկ ծածկույթից, դուք ոչինչ անելու կարիք չունեք:

Բաց ցուցակագրման ժամանակ դուք կարող եք շատ նամակներ ստանալ Medicare-ի արտադրանքներ առաջարկող ընկերություններից: Հիշեք, **Medicare.gov**, «Medicare & You» ձեռնարկը եւ 1-800-MEDICARE (1-800-633-4227) անկողմնակալ տեղեկատվության ձեր պաշտոնական աղբյուրներն են:

Ինչպե՞ս սկսել:

1. Կարդացեք ցանկացած տեղեկություն, որ ստանում եք ձեր ներկայիս պլանից՝ ներառյալ «Փոփոխությունների մասին ամենամյա ծանուցման» նամակը, որպեսզի իմանաք՝ ինչպես կարող են փոխվել ծախսերը և արտոնությունները 2025 թվականին:
2. Փնտրեք ձեր տարածքի պլանների ցուցակը: Դուք կարող եք գտնել սա ձեր «Medicare & You» ձեռնարկի վերջին տարբերակում կամ այցելելով **Medicare.gov/plan-compare**: Հնարավոր է, որ դուք ձեր տարածքում գտնեք պլաններ, որոնք՝
   - Արժենա ավելի քիչ
   - Ապահովագրեք ձեր դեղատոմսով նշանակված դեղերը
   - Հնարավորություն տալ Ձեզ օգտվել ձեր նախընտրած ծառայություն մատուցողներից, օրինակ՝ բժշկի կամ դեղատնից:
   - Առաջարկեք որոշ լրացուցիչ առավելություններ, ինչպիսիք են տեսողությունը, լսողությունը, ատամնաբուժությունը և այլն

Դուք կարող եք օգտագործել նաև Medicare.gov/plan-compare՝

- Համեմատել առողջապահական և դեղատոմսերի պլանները կողք-կողքի
- Ստացեք գրպանից վճարվող ձեր ծախսերի նախահաշիվները
- Գտեք ապահովագրական պլանի ներկայիս անդամների կողմից տրամադրված որակի և հաճախորդների սպասարկման գնահատականները
- Ստացեք հարմարեցված ծածկույթ և ծախսերի մասին տեղեկություններ ձեր նախընտրած դեղատների ու ցանկացած դեղատոմսով նախատեսված դեղամիջոցների համար

Ինչպե՞ս միանալ կամ փոխել պլանները:

Նոր պլանին միանալու համար:

- Ընտրեք «Գրանցվել» այն պլանի համար, որին ցանկանում եք միանալ **Medicare.gov/plan-compare**-ում:
- Այցելեք պլանի կայք կամ զանգահարեք նրանց ուղղակիորեն: Կարող եք նաև խնդրել թղթային ձևաթուղթ՝ այն լրացնելու և պլանին փոստով ուղարկելու համար (նրանք պետք է ստանան ձեր ձևը մինչև դեկտեմբերի 7-ը):

Ինչպե՞ս կարող եմ օգնություն ստանալ պլանները համեմատելու համար:

- **Զանգահարել 1-800-MEDICARE (1-800-633-4227) հեռախոսահամարով: TTY օգտագործողները կարող են զանգահարել 1-877-486-2048 հեռախոսահամարով:** Մենք այստեղ ենք

օգնելու ձեզ ցանկացած պահի՝ 24 ժամ՝ ներառյալ շաբաթ և կիրակի օրերը: Եթե Ձեզ օգնություն է անհրաժեշտ անգլերենից կամ իսպաներենից բացի մեկ այլ լեզվով, տեղեկացրեք հաճախորդների սպասարկման ներկայացուցչին:

- **Զանգահարե՛ք Ձեր Նահանգային Առողջապահական ապահովագրության օգնության ծրագիր (SHIP)՝ անհատականացված, անկողմնակալ և անվճար առողջապահական ապահովագրության հարցերով խորհրդատվություն ստանալու համար:** Այցելեք **shiphelp.org**՝ ձեր տեղական SHIP-ի հեռախոսահամարը ստանալու համար:

Ինչպե՞ս կարող եմ օգնություն ստանալ բժշկական ծախսերը վճարելու համար:

Եթե օգնության կարիք ունեք ձեր Medicare-ի պրեմիումները և այլ ծախսերը վճարելու համար, այցելեք **Medicare.gov/basics/costs/help**՝ իմանալու այն ծրագրերի մասին, որոնք կարող են օգնել ձեզ: Այս ծրագրերից մի քանիսը ներառում են.

Լրացուցիչ օգնություն. Օգնում է սահմանափակ եկամուտ և ռեսուրսներ ունեցող մարդկանց վճարել Medicare-ի դեղերի ծածկույթի համար (Մաս D): Այցելեք **Medicare.gov/basics/costs/help/drug-costs**՝ ավելին իմանալու համար: Կարող եք դիմել նաև **ssa.gov/medicare/part-d-extra-help** կայքում:

Medicare Խնայողությունների ծրագրեր. Ընդգրկում է Մաս A և/կամ Մաս B պրեմիումները սահմանափակ եկամուտ և ռեսուրսներ ունեցող մարդկանց համար: Լրացուցիչ մանրամասների համար այցելեք **Medicare.gov/basics/costs/help/medicare-savings-programs**:

Medicare դեղատոմսի վճարման պլան. Ձեզ տալիս է հնարավորություն տարածել ձեր դեղերի ծախսերը ամսական վճարումների վրա ամբողջ տարվա ընթացքում, եթե ունեք Մաս D ծածկույթ: Վճարման այս տարբերակը սկսվում է 2025 թվականին և կամավոր է ու անվճար: Կապվեք ձեր պլանի հետ կամ այցելեք **Medicare.gov/prescription-payment-plan**՝ ավելին իմանալու համար:

Medicare-ի կարևոր ամսաթվերը

Հոկտեմբերի 1. Պատրաստվեք բաց ցուցակագրմանը

Վերանայե՛ք Ձեր ներկայիս ապահովագրական պլանից ստացված բոլոր ծանուցումները հաջորդ տարվա համար նախատեսված ծախսերի և արտոնությունների փոփոխությունների մասին: Այնուհետեւ այցելեք **Medicare.gov/plan-compare**՝ ձեր կարիքներին համապատասխանող պլանները գտնելու և համեմատելու համար:

Հոկտեմբերի 15՝ սկսվում է բաց ցուցակագրումը

Սա տարվա այն եզակի ժամանակն է, երբ Medicare ունեցող բոլոր մարդիկ կարող են փոփոխություններ կատարել իրենց առողջության և դեղերի ապահովագրության պլաններում հաջորդ տարվա համար:

Դեկտեմբերի 7՝ ավարտվում է բաց ցուցակագրումը

Ընդհանրապես սա վերջին օրն է, երբ կարող եք փոխել ձեր հաջորդ տարվա Medicare-ի ծածկույթը: Առողջապահության կամ դեղամիջոցների պլանը պետք է ստանա ձեր ցուցակագրումը մինչեւ դեկտեմբերի 7-ը:

Հունվարի 1՝ ապահովագրական ծածկույթն գործողության մեջ է մտնում:

Եթե անցնեք առողջապահական կամ դեղամիջոցների նոր պլանին, ձեր նոր ծածկույթը սկսվում է հունվարի 1-ից: Եթե պահպանում եք Ձեր ներկայիս ապահովագրական ծածկույթը, արտոնությունների կամ ծախսերի հետ կապված նոր տարվա համար ցանկացած փոփոխություն նույնպես ուժի մեջ է մտնում հունվարի 1-ից:

Ծածկույթի փոփոխությունները հունվարի 1-ից հետո

Հունվարի 1-ից մարտի 31-ը, եթե ընդգրկված եք Medicare Advantage պլանում, կարող եք հրաժարվել ձեր պլանից և անցնել մեկ այլ Medicare Advantage պլանի՝ դեղորայքի ծածկույթով կամ առանց դրա, կամ անցնել Original Medicare-ի: Եթե անցնեք Original Medicare-ի, հնարավորություն կունենաք նաև միանալ Medicare դեղորայքային պլանին: Ձեր ծածկույթը սկսվում է այն ամսվա առաջին օրը, որը հաջորդում է պլանի կողմից Ձեր մասնակցության հայտը ստանալուն:

Medicare

Դուք իրավունք ունեք ստանալու Medicare-ի վերաբերյալ տեղեկատվությունը մատչելի ձևաչափով, օրինակ՝ խոշոր տպագիր, բրայլյան կամ աուդիո տարբերակներով: Դուք նաև իրավունք ունեք բողոք ներկայացնելու, եթե կարծում եք, որ ձեր նկատմամբ խտրականություն է կիրառվել: Այցելեք **Medicare.gov/about-us/accessibility-nondiscrimination-notice**, կամ զանգահարեք 1-800-MEDICARE (1-800-633-4227)՝ լրացուցիչ տեղեկությունների համար: TTY օգտագործողները կարող են զանգահարել 1-877-486-2048 հեռախոսահամարով:

Այս արտադրանքն տրամադրում է ԱՄՆ հարկ վճարողների հաշվին:

CMS Product No. 11220 • September 2025